ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՊԵՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 29.05.2017թ. ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ «ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)**	**Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
	1	**2**	**3**	**4**	
	ԱԺ պատգամավոր, պետական-իրավական և մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Արփինե Հովհաննիսյան	«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ	Առաջարկությունը ներկայացվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի լրամշակված տարբերակի տեսքով, մասնավորապես առաջարկվել է նախագիշը շարադրել հետևյալ խմբագրությամբ. **Հոդված 1.** «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի ապրիլի 3-ի ՀՕ-320 օրենքի	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է

			(այսուհետ՝ Օրենք) 27.1-րդ հոդվածի՝ 1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ. «1. Կարգավորման ազդեցության գնահատումը նորմատիվ իրավական ակտի ընդունման արդյունքում հնարավոր փոփոխությունների վերլուծությունն է, իսկ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենքի նախագծի դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության բյուջետային ուղերձով ներկայացված տեղեկատվությունն է: Օրենքի նախագիծը մշակող մարմինը Հայաստանի Հանրապետության կառավարության կամ Հայասանի Հանրապետության վարչապետի հանձնարարությամբ կազմակերպում է նախագծի		

			կարգավորման ազդեցության գնահատումը: Ազգային ժողովի պատգամավորի կամ խմբակցության կողմից կամ քաղաքացիական նախաձեռնության կարգով առաջադրված և Ազգային ժողովի կողմից շրջանառված օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության կամ Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը կազմակերպում է նախագծի կարգավորման ազդեցության գնահատումը, որը կցվում է նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության		

			առաջարկություններին: Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության տարեկան ծրագրով նախատեսված դեպքերում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը մշակող մարմինը կազմակերպում է նախագծի կարգավորման ազդեցության գնահատումը:». 2) 2-րդ մասի 1-ին նախադասության «Նախագիծ մշակող մարմինը» բառերը փոխարինել «Նախագծի կարգավորման ազդեցության գնահատումը կազմակերպող մարմինը» բառերով. 3) 3-րդ մասի 1-ին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.		

			«Ազդեցության գնահատողը նորմատիվ իրավական ակտի նախագիծը ստանալու օրվանից հետո՝ 15-օրյա, իսկ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հանձնարարության մեջ ավելի կարճ ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ այդ ժամկետում, պարտավոր է իրականացնել ազդեցության գնահատում և դրա վերաբերյալ կազմել կարգավորման ազդեցության գնահատման եզրակացություն (այսուհետ՝ եզրակացություն) և այն ներկայացնել նախագծի կարգավորման ազդեցության գնահատումը կազմակերպող մարմնին: **Հոդված 2. Օրենքի ուժի մեջ մտնելը** 1. Սույն օրենքն ուժի մեջ է		

			մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:»:		